ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ – 2020. ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Երևան 2020 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ հետազոտություն է սա ----------4

Մեթոդը ----------5

ՄԱՍ I. Սպասելիքներ եւ դիսկուրսներ ---------- 6

ԼՂ-ում 2020-ի ընտրություններից սպասելիքները ----------5

Հայաստանում եւ ԼՂ-ում 2020-ի մասին շրջանառվող դիսկուրսները---------- 9

ՄԱՍ II. 2020 թ. ընտրությունները հակամարտության համատեքստում---------- 10

Ժողովրդավարության նշանակությունը ԼՂ-ում----------10

Ընտրությունների կարեւոր համատեքստերը---------- 12

Հակամարտությունը եւ ԼՂ-ում բնակչության ընտրական վարքը---------- 15

ՄԱՍ III. Ընտրական գործընթացների առանձնահատկությունները ԼՂ-ում ----------20

Քարոզչությո՞ւն, ո՞ր աղբյուրներով ----------20

Թեմաներ, որոնք կշրջանցվեն քարոզչության ժամանակ----------23

Հաղթանակի/բարձր արդյունքների վճռորոշ գործոնները----------24

Նոր, ոչ համակարգային թեկնածուների առաջադրման հնարավորությունները ----------27

Հետաքրքրվածությունն առաջիկա ընտրություններով եւ նախկին ընտրությունների գնահատականները----30

ՄԱՍ IY. ԼՂ քաղաքական եւ քաղաքացիական լանդշաֆտը 2020-ի նախաշեմին----------35

Ի՞նչն է ձեւավորում ԼՂ-ի քաղաքական լանդշաֆտը---------- 35

ԼՂ-ի քաղհասարակության դերը ---------- 37

Կանանց եւ երիտասարդների ակտիվության մակարդակը ---------- 39

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ----------40

Ի՞նչ հետազոտություն է սա

«Ռեգիոն» հետազոտական կենտրոնը 2019 թ. հոկտեմբերի 10 – նոյեմբերի 10 ընթացքում փորձագիտական հարցում անցկացրեց ԼՂ-ում 2020թ. գարնանը նախատեսված ընտրությունների թեմայով: Թեմա, որն ի տարբերություն նախորդ տարիների, հանրային հարթակներում սկսել էր շրջանառվել մեր հետազոտությունից շատ ավելի առաջ, տարբեր համատեքստերում, եւ արդեն այդ պահին արդիական էր:

Մասնակցել են Հայաստանում եւ ԼՂ-ում միասնաբար 66 քաղաքական գործիչներ, ՀԿ-ների ներկայացուցիչներ, առանձին հասարակական գործիչներ, վերլուծաբաններ, այլ մասնագետներ. Հայաստանում՝ 11 տարբեր քաղաքական կուսակցությունների (այդ թվում՝ խորհրդարանական 3 ուժերի) եւ 29 հասարակական սեկտորի ներկայացուցիչներ, ԼՂ-ում՝ 11 քաղաքական գործիչներ (այդ թվում՝ խորհրդարանական 4 կուսակցությունների) եւ 15 հասարակական սեկտորի ներկայացուցիչներ: Հարցվածների ղարաբաղյան խմբում են եղել նաեւ ԼՂ նախագահական ընտրություններում մասնակցելու մասին հայտարարած 2 գործիչներ:

Այդպիսով հարցման համար ձեւավորվել է հակամարտության եւ ԼՂ-ի ներքին կյանքի հարցերով դիսկուրս ձեւավորող քաղաքական-հասարակական գործիչների, առանձին մասնագետների ներկայացուցչական մի խումբ:

Մեթոդը

Հետազոտությունն իրականացվել է խորքային հարցազրույցների մեթոդով, անանուն: Քաղաքական եւ հասարակական կազմակերպությունների պարագայում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից հարցմանը մասնակցել է մեկ ներկայացուցիչ: Հարցվածները պատասխանել են 20 հարցերի՝ կապված անվտանգության, հակամարտության եւ ԼՂ ներքին կյանքի կազմակերպման համատեքստերի, ժողովրդավարության նշանակության, ԼՂ-ում ընտրական նախկին եւ ներկա, այդ թվում՝ քարոզչական գործընթացների առանձնահատկությունների, ընտրությունների նկատմամբ վերաբերմունքի եւ այլ փոխկապված խնդիրների հետ:

Արդյունքները մշակվել են որակական եւ քանակական, դիսկուրս վերլուծության մեթոդով: Հարցվածներն ազատ են եղել նշելու մեկ եւ ավելի առաջնահերթություններ, տարբերակներ, դա է պատճառը, որ մի շարք գրաֆիկներում պատասխանները միասնաբար անցնում են 100%-ը:

Եղել են հարցեր, որոնց պատասխաններում գրանցվել են ակնհայտ տարբեր առաջնահերթություններ հարցվածների հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերում: Մինչդեռ ընդգծված տարբերություններ չեն գրանցվել երկու ուրիշ խմբերի՝ Հայաստանում եւ ԼՂ-ում գործող կուսակցությունների ներկայացուցիչների եւ հասարակական գործիչների/մասնագետների պատասխանները համեմատելու ընթացքում:

Դա է պատճառը, որ հարցումների արդյունքները ներկայացրել ենք երկու դիտանկյուններից՝ որպես բոլոր հարցվածների ընդհանուր պատասխաններ, եւ որպես հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի մասնավորեցված պատասխաններ:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂ – 2020. ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

(2019 թ. հոկտեմբերի 10 - նոյեմբերի 10)

ՄԱՍ Ի.	Սպասելիքներ եւ դիսկուրսներ

Սպասելիքներ ԼՂ-ում 2020-ի ընտրություններից

Հայաստանում եւ Ղարաբաղում առաջիկա ընտրությունների հետ կապված սպասելիքների մեծ մասը լավատեսական բնույթի են: Այդպես է եւ ընդհանուր արդյունքների, եւ հայաստանյան ու ղարաբաղյան խմբերի առանձին դիտարկման դեպքում:

Հարցվածների ղարաբաղյան հատվածում առաջիկա ընտրական գործընթացներից ոչ մի սպասելիք չունեցող չի եղել:

Տես՝ ստորեւ բերված գրաֆիկները:


Ընդհանուր սպասելիքներ 2020 թ. ընտրություններից
6,1%
19,7%
74,2%
Լավատեսական
Հոռետեսական
Ոչ մի սպասելիք


Սպասելիքներ 2020 թ. ընտրություններից
80
70
60
50
40
30
20
10
0
72,5%
76,9%
22,5%
23,1%
5%
0%
Լավատեսական
Հոռետեսական
Ոչ մի սպասելիք
Հայաստանում
ԼՂ-ում

Այդ սպասելիքները հիմնավորվել են հիմնականում ստորեւ բերված տիպային ձեւակերպումներով.

Լավատեսական սպասելիքներ	**Հոռետեսական սպասելիքներ, անհանգստություններ**	**Ոչ մի սպասելիք**
Հայաստանում եւ ԼՂ-ում լավատեսական սպասելիքները ձեւակերպվել են ազատ, թափանցիկ ընտրություններ անցկացնելու հնարավորության եւ դրանցից բխող դրական ազդեցությունների հիմնավորումներով, ԼՂ-ում հանրային վստահության, ներքին կյանքի արդյունավետ կազմակերպման, Հյաաստանի հետ հասարակական-քաղաքական կյանքը համապատասխանեցնելու տեսանկյուններից:	**Կան տարբերություններ հայաստանյան եւ ղարաբաղյան հատվածում ոչ լավատեսական սպասելիքներ ունեցողների հիմնավորումներում:** **Այսպես՝** **Հայաստանում** ընտրությունների հետ կապված հոռետեսությունն արտահայտված անհանգստությունների տեսքով է. ընտրությունների ժամանակ կարող է ներքին լարվածություն առաջանալ Ղարաբաղում, չեն բացառվում բախումները մրցակից թիմերի միջեւ, ինչպես դա եղել է հայաստանյան նախկին ընտրական գործընթացների ժամանակ, կամ՝ ընտրությունների ժամանակ չեն բացառվում Ադրբեջանի կողմից սրացումները սահմանում, ռազմաճակատում: **ԼՂ-ում** հոռետեսությունը բացատրվել է նրանով, որ ընտրությունների հետ կապված ընդհանուր սպասելիքները չեն իրականանալու, կյանքը հիմնովին չի բարելավվելու, խորհրդարանն էապես չի թարմացվելու նոր ուժերով, գործելու են անձերի, ռեսուրսների, ծանոթ-բարեկամների նախկին մեթոդներով:	Այս կարգի պատասխանները հիմնավորվել են այն բանով, որ Հայաստանը ԼՂ-ի սուբյեկտայնացման սխալ քաղաքականություն է վարում, պետք է դե-յուրե ձեւակերպել ԼՂ-ի միացումը Հայաստանին, իսկ ԼՂ-ում ապագա ընտրությունները նույնն են, ինչ-որ Հայաստանի ցանկացած ՏԻՄ ընտրությունները:

Հայաստանում եւ ԼՂ-ում 2020-ի մասին շրջանառվող դիսկուրսները

Հարցվածներին խնդրել էինք նկարագրել 2020-ի ընտրությունների մասին Հայաստանում եւ ԼՂ-ում շրջանառվող դիսկուրսները, որոնք ըստ էության լրացնում են հանրային սպասելիքների ու պատկերացումների ամբողջական պատկերը:

Այս հարցում էական տարբերություններ չկան հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխաններում:

Նկարագրված դիսկուրսները երեք խմբի են.

- Հայաստանում շրջանառվում է ԼՂ-ի եւ Հայաստանի քաղաքական միջավայրերը համապատասխանեցնելու, թավշյա հեղափոխության ազդեցության, ԼՂ-ի ընտրություններում Հայաստանի ներառվածության դիսկուրսը: Իսկ ԼՂ-ում գերակշռում է «անկախությու՞ն, թե՞ Միացում» դիսկուրսը: Չնայած որ, ինչպես ընդգծում են այսպես պատասխանած հարցվածները, այս երկու դիսկուրսները հիմքում անվտանգության եւ հայկական շահերն ավելի արդյունավետ պաշտպանելու մասին են:

- Եւ Հայաստանում, եւ ԼՂ-ում շրջանառվում է անձերի դիսկուրսը, թե արդեն այդ պահին ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած գործիչներից ովքե՞ր ավելի մեծ շանսեր ունեն հաղթանակի համար, ընդ որում՝ նաեւ պաշտոնական Հայաստանի կողմից սատարման երաշխիքներով: Եվ այդ ուղղակի կամ անուղղակի ուղերձներն ազդում են ընտրազանգվածի վրա:

- Ինչպես ընդգծել են ղարաբաղյան խմբի ներկայացուցիչները, կա տարբերություն հայաստանյան եւ ղարաբաղյան դիսկուրսների բնույթի միջեւ: Հայաստանում դիսկուրսները տարածվում են հեղափոխության եւ հակահեղափոխության, սեւ-սպիտակի տրամաբանությամբ, իսկ ԼՂ-ում այդ ճամբարների միջեւ սահմանն այդքան կոշտ չէ, մարդիկ իրար ճանաչում են, շփվում, անգամ եթե ունեն տարբեր մոտեցումներ տարբեր հարցերում:

ՄԱՍ II.	2020 թ. ընտրությունները հակամարտության համատեքստում

Մեր հարցաթերթում կային մի քանի հարցեր ընտրությունները հակամարտության համատեքստում դիտարկելու հետ կապված:

Ժողովրդավարության նշանակությունը ԼՂ-ում

Եւ ընդհանուր արդյունքներով, եւ հայաստանյան ու ղարաբաղյան խմբերի առանձնացված պատասխաններով՝ ճնշող մեծամասնությունը գտնում է, որ հակամարտության համատեքստում ժողովրդավարական բարեփոխումները ԼՂ-ի համար ունեն կարեւոր նշանակություն: Բայց կան տարբեր հիմնավորումներ:

ԼՂ-ում ավելի մեծ քանակ են կազմել հարցվածները, որոնք այդ կարեւորությունը տեսնում են նախեւառաջ իրենց ներքին կյանքի համատեքստում, ժողովրդավարացումը կապում են Ղարաբաղում սոցիալ-քաղաքական, տնտեսական զարգացման, իրավունքների ու ազատությունների հաստատման հետ, ինչը «միայն դրական կարող է անդրադառնալ հայկական շահերի պաշտպանության վրա»:

Իսկ հայաստանյան խմբում ավելի շատ են եղել այն հարցվածները, որոնք ժողովրդավարության նշանակությունը հիմնավորել են նախեւառաջ հակամարտության հանգամանքերով:

Ահա մի քանի տիպիկ ձեւակերպումներ երկու հղումներով:

Հղում ներքին կյանքի բարելավմանը

- «Ժողովրդավարությունն ու ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորումն Արցախում կարեւոր են սոցիալական արդարության, բիզնես նախաձեռնողականության տեսանկյունից», «Արցախի ներսի համար է կարեւոր, հանրային կյանքը համերաշխ դարձնելու համար»,
- «Մեզ համար ժողովրդավարությունը եւ անվտանգությունը ներքին կյանքում փոխկապված են, դա մեր անվտանգության կարեւոր ռեսուրսն է», «Արդարությունը հատկապես պատերազմական Արցախում ֆունդամենտալ նշանակություն ունի»,
- «Հակամարտության կարգավորման առումով ոչ մի նշանակություն չի ունենալու, բայց ներքին առումով մեծ , այդպես ներդաշնակ կլինեն եւ ՀՀ-ի ու Արցախի իշխանությունների հարաբերությունները, եւ ընդհանրապես երկու պետությունների հարաբերությունները»,
- «Արդարության մթնոլորտի բացակայությունը, որն այսօր գոյություն ունի Արցախում, անվտանգության առումով մեծ խնդիր է: Ժողովրդավարության պայմաններում մարդիկ ավելի մեծ վստահությամբ են ներգրավվում տարբեր գործընթացների մեջ՝ լինեն դա զինվորական հավաքները, ներդրումները սեփական երկրում, կամ՝ հանրային կյանքի մասնակցության այլ ձևեր»,
- «Ժողովրդավարացումը ապագայի հույս է ներշնչում»:

Հղում հակամարտությանը

- «Ժողովրդավարությունը մեծ նշանակություն ունի, քանի որ հիմնավորում է, թե ինչու Արցախը չի կարող լինել ավտորիտար Ադրբեջանի կազմում»,
- «Միջազգային կառույցներին ապացուցելու համար է կարեւոր, որ Արցախը սուվերեն պետություն է, որը կարողանում է կազմակերպել իր ներքին կյանքը», «Ազդում է միջազգային հանրության տեսակետի վրա, դա հնարավորություն կտա խոսել նույն լեզվով, ունենալ նույն հասկանալի ստանդարտները»,
- «Ժողովրդավարությունը հակամարտությունում ԼՂ-ի հաղթաթուղթն է, քանի որ հակամարտությունը իրավունքների համար է»:

Տես նաեւ ստորեւ բերված գրաֆիկները:





Ընտրությունների կարեւոր համատեքստերը

Հարցվածների միասնական կարծիքով 2020-ի ընտրությունները կարեւոր են մի շարք տեսանկյուններից: Բոլորից շատ նշվել են սոցիալ-քաղաքական, ապա՝ հակամարտության, տնտեսական զարգացման եւ իրավունքների ու ազատությունների համատեքստերը: Էապես ավելի քիչ հարցվածներ են (3%) մատնանշել, որ ընտրությունները կարեւոր են Հայաստանի հետ հարաբերությունների համատեքստում:

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



Բայց կան տարբերություններ հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխաններում առաջնահերթությունները դիտարկելիս:

Ստորեւ բերված գրաֆիկից տեսնում ենք, որ **հայաստանյան խմբում** ընտրությունները հակամարտության համատեքստում կարեւորողների քանակն ավելի շատ է եղել, քան ղարաբաղյան խմբում: Եվ հակառակը, ղարաբաղյան խմբում իրավունքների

ու ազատությունների համատեքստի օգտին արտահայտվածների քանակը 24, 2%-ով գերազանցել է հայաստանյան խմբի ներկայացուցիչներին:

Իսկ 2020թ. ընտրությունների Հայաստանի հետ հարաբերությունների համատեքստը կարեւորել են միայն հայաստանյան խմբի ներկայացուցիչները (5%):

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



Հակամարտությունը եւ ԼՂ-ում բնակչության ընտրական վարքը

Բոլոր հարցվածների մեծ մասը նշել է, որ հակամարտությունը պայմանավորում է ԼՂ-ի բնակչության ընտրական վարքը, իսկ առաջիկա ընտրությունների ժամանակ այդ վարքի փոփոխություն չի լինի:

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



Սակայն դարձյալ կան տարբերություններ հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխաններում:

Ի տարբերություն հայաստանյան խմբի, ԼՂ-ում ավելի շատ հարցվածներ են նշել, որ հակամարտությունը չի պայմանավորում ղարաբաղյան ընտրողների վարքը, բայց նաեւ՝ ավելի շատ են նշել, որ առաջիկա ընտրություններում կլինի ընտրական վարքի փոփոխություն:

Պայմանավորում է/չի պայմանավորում պնդումները հիմնավորվել են հետեւյալ բացատրություններով.

Չի պայմանավորում, քանի որ

- հակամարտությունը, պատերազմական վիճակը այնքան երկար տարիների իրողություն են, որ արդեն որևէ էական ազդեցություն չեն թողնում ընտրողների վարքագծի վրա:
- թեկնածուների, մրցակից խմբերի դիրքորոշումները հակամարտության առանցքային հարցերում նույնն են, հետեւաբար նրանց միջեւ ընտրություն կատարելիս առաջնային են դառնում այլ գործոններ:

Պայմանավորում է, հակամարտությունը անպայման թելադրում է որոշակի ընտրական վարք ԼՂ-ում, քանի որ

- Ղարաբաղում միշտ գլխավոր հրամանատար են ընտրել, ղեկավարվել են անվտանգության հարցերով, եւ հիմա էլ այդպես կլինի, պայմանավորում են ֆոբիաների առումով:
- ղարաբաղյան հանրությունը իզոլացված, միջազգայնորեն չճանաչված հանրություն է, չեն ճանաչվում նաեւ այդ հանրության ընտրությունները, եւ ընտրությունների հետ կապված ամենաբարձր նշաձողը եղել է Ադրբեջանից ավելի լավ ընտրություններ ունենալը: Ավելի բարձր մակարդակի մասին չեն մտածել:

Տես նաեւ ստորեւ բերված գրաֆիկը:



Ընտրությունների ժամանակ հակամարտության թեմայով բազմակարծություն

«Ակնկալու՞մ եք արդյոք ընտրությունների փուլում բազմակարծություն հակամարտության կարգավորման թեմայի շուրջ» հարցին հարցվածների մեծ մասը տվել է ժխտական պատասխան, որ հակամարտության թեմայով բազմակարծություն չի լինելու:

Սա այն հարցն է, որով որեւէ տարբերություն չի գրանցվել նաեւ հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխանների միջեւ:

Նրանք, ովքեր կարծում են, որ ընտրությունների ժամանակ կհնչեն տարբեր կարծիքներ հակամարտության թեմայով, պատասխանել են, որ

- բանավեճ կլինի հիմնական մեթոդների շուրջ, բայց բանակցություններին մասնակցելու եւ անկախության ճանաչման հարցերում կա կոնսենսուս,
- կարծիքները տարբեր կլինեն միայն մեկ հարցում, այսօ՞ր գնանք միացման, թե՞ անկախություն ստանանք, նոր:

Նրանք, ովքեր պնդել են, որ բազմակարծություն չի լինի, պատճառաբանել են, որ

- այս թեմայով շատ ասելիք չկա, անգամ տարբեր թվացող մոտեցումների («Արցախը Հայաստան է եւ վերջ» եւ «Արցախի ինքնորոշման իրավունք») կողմնակիցների միջեւ մեծ տարբերություն չկա, քանի որ «կա հիմքում ընկած գիտակցում, որ Արցախը պետք է պաշտպանել ամեն գնով»: Եվ այդ գիտակցումը բազմակարծություն չի ենթադրում:
- «… մեր ժողովուրդն այդ հարցում բազմակարծություն չի ընդունում: Մի քանի ամիս առաջ Սամվել Բաբայանի փորձը բոլորի համար դաս եղավ, կոշտ քննադատությունից հետո նա այլեւս չի բարձրաձայնում Ռուսաստանի պռոտեկտորատի գաղափարը», «կարգավորման թեման անգամ թոփ եռյակում չի լինելու, այլ լինելու է միացմա՞ն, թե՞ անկախության թեման»:

Եւ հայաստանյան, եւ ղարաբաղյան խմբերում կան մի շարք իրարամերժ պատասխաններ, բայց նույն հիմնավորմամբ՝ ընտրությունների ժամանակ կոնֆլիկտի թեման առհասարակ խոցելի թեմա է:

Այո, կլինի բազմակարծություն, քանի որ թեկնածուներն այդպես հարված կհասցնեն միցակիցներին, դա խոցելի թեմա է:

Ոչ, չի լինի բազմակարծություն, քանի որ դա իմիջային հարված կհասցնի այն թեկնածուին, ով կխոսի զիջումներից, դա խոցելի թեմա է:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





ՄԱՍ III.	Ընտրական գործընթացների առանձնահատկությունները ԼՂ-ում

Քարոզչությո՞ւն, ո՞ր աղբյուրներով

Հայաստանում եւ ԼՂ-ում ավելի մեծ քանակ են կազմել այն հարցվածները, որոնք հակված են **մեծ, կամ որոշ նշանակություն** տալու ընտրությունների ժամանակ քարոզչական գործընթացներին: Իրենց այդ կարծիքը նրանք հիմնավորել են այն բանով, որ

- մարդիկ այդպես կհասկանան, որ իրենց ճակատագիրն իրենք կարող են կերտել առանց կողքից ճնշումների, ազդեցությունների, մարդիկ այդպես կհասկանան, որ իրենց ձայնը կարեւոր է,
- քարոզչությունը կարեւոր է հատկապես շրջաններում, գյուղերում,
- քարոզչությունն ազդում է նույնիսկ այն մարդկանց վրա, ովքեր արդեն որոշել են, թե ում պետք է ընտրեն,
- եթե այդպես չլիներ, ապա քարոզչությունը ներկայիս նման, դեռ նախքան պաշտոնական գործընթացը, փաստորեն սկսված չէր լինի:

Ղարաբաղյան հարցվածների խմբում քարոզչական գործընթացին մեծ նշանակություն տված հարցվածներն ավելի շատ են, քան **հայաստանյան այն հարցվածները**, որոնք ավելի զուսպ գնահատականներ են տվել քարոզչության արդյունավետությանը ԼՂ-ում իր բոլոր առանձնահատկություններով (փոքր հանրություն, որտեղ բոլորը բոլորին ճանաչում են, հակամարտության մշտական համատեքստ, նախկին ընտրական գործընթացների փորձ եւ այլն):

Եվ հայաստանյան, եւ ղարաբաղյան խմբերում էականորեն ավելի քիչ են եղել հարցվածները, որոնք նշել են, որ քարոզչությունը ոչ մի նշանակություն չի ունենալու առաջիկա ընտրությունների ժամանակ:

Ընդ որում, թե ընդհանուր արդյունքներով, թե հայաստանյան եւ ղաաբաղյան խմբերի պատասխաններն առանձին դիտարկելիս գրանցվել են առաջնահերթությունների միանման պատկերներ: Առավել արդյունավետ են համարվել կենդանի շփումները, հատկապես գյուղական վայրերում, ապա հեռուստատեսությամբ տարվող քարոզչությունը:

Ղարաբաղյան խմբում նշել են, որ նկատի ունեն նաեւ հայաստանյան հեռուստաընկերությունները, եւ առհասարակ հայաստանյան մեդիայի դերը նույնպես, որը կարող է մեծ գործ կատարել քարոզչական գործընթացների առաջմղման հարցում:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:






Հաղորդակցական ո՞ր աղբյուրներով կարող է արդյունավետ լինել նախընտրական քարոզչությունը ԼՂ-ում
(ընդհանուր արդյունքներ)
Հեռուստատեսություն
48.5%
Օնլայն ՁԼՄ
15.2%
FB
51.5%
Կենդանի շփումներ
81.8%
ԴՊ
4.5%
Այլ պատասխան
3%



Թեմաներ, որոնք կշրջանցվեն քարոզչության ժամանակ

Հայաստանում հարցվածների 27.5%-ի, իսկ ԼՂ-ում 23% -ի կարծիքով նման թեմաներ առաջիկա ընտրություններում չեն լինի: Ինչպես Հայաստանում հարցվածների մեծ մասը (62.5%), այնպես էլ ԼՂ-ում հարցվածների գրեթե կեսը (46%) նշել են այսպես կոչված տաբու թեմաները.

- հակամարտության կարգավորման, Մադրիդյան սկզբունքների, փոխզիջումների հարցերը,
- Հայաստանի հետ հարաբերությունների հարցերը, «Միացում»-ի հարցերը,
- նախկին իշխանություններին, անցյալին քաղաքական գնահատականների հարցը,
- կոռուպցիայի հարցը,
- բանակի, անվտանգության որոշ հարցեր,
- հայրենադարձության հարցը,
- սեռական փոքրամասնությունների հարցը,
- երիտասարդության եւ կանանց հարցերը;

Հաղթանակի/բարձր արդյունքների վճռորոշ գործոնները

Կան տարբեր կարծիքներ նաեւ այն հարցում, թե ԼՂ-ի առաջիկա ընտրություններում որո՞նք են լինելու հաղթանակի/բարձր արդյունքների վճռորոշ գործոնները: Միասնական արդյունքներով՝ առավել վճռորոշ են լինելու թեկնածուների կապերն ու ռեսուրսները, ապա՝ նրանց ունեցած դերը հակամարտության մեջ եւ նոր/ ոչ համակարգային գործիչ լինելը:

Բայց դարձյալ կա շեշտադրումների տարբերություն հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերում: Եթե կապերի ու ռեսուրսների առումով հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերում կարծիքները համընկնում են, ապա հայաստանյան հարցվածների խմբում ղարաբաղյան հակամարտության մեջ ունեցած դերն ավելի շատ է նշվել որպես հաղթանակի համար վճռորոշ գործոն, քան ղարաբաղյան խմբում, եւ հակառակը, թեկնածուի նոր դեմք լինելն ավելի է կարեւորվել ղարաբաղյան խմբի կողմից, քան հայաստանյան:

Բացի մեր առաջարկած գործոնների տարբերակներից, հարցվածները նշել են իրենց կարծիքով եւս 4 գործոններ, որոնք կարող են կարեւոր կամ վճռորոշ դեր խաղալ ընտրություններում հաղթանակ գրանցելու կամ բարձր քվե ստանալու համար:

Այսպես՝ Հայաստանի ազդեցություն ասելով, հարցվածները նկատի են ունեցել ՀՀ իշխանությունների աջակցությունը, ՀՀ իշխանությունների հետ հարաբերվելու արդյունավետ բանաձեւ առաջարկելը: Եվ այսպիսի պատասխան ավելի շատ տվել են հայաստանյան խմբի ներկայացուցիչները, քան ղարաբաղյան խմբինը:

Թեկնածուի վստահելի լինել ասելով նկատի է առնվել նրանց կենսագրությունը, հանրության մեջ ունեցած դրական համբավը, կոռուպցիոն պատմությունների մեր ներքաշված չլինելը: Եվ այսպիսի պատասխան ավելի շատ տվածները ղարաբաղյան հարցվածների խմբում են:

Կոնֆլիկտի հարցերին մոտեցումները՝ վերաբերմունքը խնդրի կարգավորման հարցերին, այս թեմայով ժողովրդի հետ անկեղծ խոսելը, սահմանի պաշտպանության հեռատես և իրատես ծրագիր ունենալը:

Բարեփոխումներին միտվածությունը նշել են այն հարցվածները, որոնք ընդգծել են Ղարաբաղի բնակչության փոփոխությունների սոցիալական պահանջը, անցյալի բեռը հաղթահարելու ուժը եւ այլ հանգամանքներ:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





Նոր, ոչ համակարգային թեկնածուների առաջադրման հավանականությունը/հնարավորությունները

Ընդհանուր արդյունքներով, հարցվածները, որոնք համարում են, որ ԼՂ-ում ընտրությունների ժամանակ հնարավոր է նոր, ոչ համակարգային գործիչների հայտնվելը, գրեթե կրկնակի ավելի շատ են հակառակը պնդողներից: Ընդ որում, Հայաստանում ավելի շատ են հարցին դրական պատասխանածները, Ղարաբաղում՝ ավելի շատ են բացասական կարծիք ունեցողները:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





Ինչո՞ւ: Պատասխանները հիմնավորվել են ստորեւ բերված տիպային ձեւակերպումներով.

Այո, հնարավոր է	Ոչ, հնարավոր չէ
Հայաստանում եւ ԼՂ-ում դրական պատասխան տված հարցվածները տարբեր պատկերացումներ են ներկայացրել ոչ համակարգային, նոր	**Հայաստանում եւ ԼՂ-ում** բացասական պատասխանածները հիմնավորել են իրենց պնդումը, որ Ղարաբաղյան հանրությունը փոքր է, բոլորը բոլորին ճանաչում են: Կամ, որ անցած

գործիչ հասկացության մասին: Նրանց տեսանկյունից արդեն հիմա կան ոչ համակարգային գործիչներ. մարդիկ, որոնք մաս չեն կազմել իշխանություններին, կամ՝ անգամ եթե աշխատել ու աշխատում են կառավարական ու այլ պաշտոնական կառույցներում, չեն մասնակցել ընտրական տարբեր գործարքներին, որոշում կայացնողների խմբում, կոռուպցիոն համակարգում չեն եղել, կան նոր ոչ համակարգային գործիչներ, որոնք հանրությանը ծանոթ են իրենց այլ, բայց ոչ քաղաքական զբաղմունքներով (նախկին զինվորականներ են, պատերազմի մասնակիցներ): Նոր, ոչ համակարգային գործիչների հայտնվելը ԼՂ-ում հնարավոր է, ուրիշ բան, որ դժվար թե շանս ունենան հաղթելու համար:	տարիների ընթացքում նոր քաղաքական դեմքեր ունենալու, սերնդափոխության հնարավորություն չի եղել, նոր դեմքեր կան հանրային դաշտում, բայց նրանք չունեն քաղաքական փորձառություն եւ ռեսուրսներ ընտրություններին մասնակցելու համար:

Հետաքրքրվածությունն առաջիկա ընտրություններով եւ նախկին ընտրությունների գնահատականները

ԼՂ-ում առաջիկա ընտրությունները

Այն հարցին, թե **«Ինչպիսի՞ն է լինելու ԼՂ-ի եւ Հայաստանի բնակչության հետաքրքվածությունը 2020-ի ընտրություններով եւ ի՞ն մասնակցայնություն կդրսեւորի ԼՂ բնակչությունը քվեարկության օրը»** հայաստանյան ու ղարաբաղյան խմբերում տրվել են միանման պատասխաններ: Հետաքրքրվածությունը բարձր է լինելու, մասնակցությունն ավելի բարձր, քան նախորդ ընտրական գործընթացների ժամանակ էր: Չնայած, քիչ չեն լինելու նաեւ ընտրություններին չգնացող քաղաքացիները:

Ահա տիպային պատասխանների օրինակներ

- «Ավելի մեծ հետաքրքրվածություն կլինի, քան նախորդ տարիներին: Բայց կլինեն մարդիկ, որ չեն մասնակցի ընտրություններին, և այդ թիվը բավականին մեծ կլինի: Հայաստանում նույնպես հետաքրքրվածությունն աճել է, ու շարունակում է աճել: Բոլորին հետաքրքիր է, թե ի՞նչ է կատարվում Արցախում: Չմասնակցողների թիվը կապված է թերահավատության հետ, նրանց համար բոլորը ծախված են: Իսկ մասնակցության աճը պայմանավորում եմ նրանով, որ մարդիկ սկսել են գիտակցել իրենց ձայների արժեքը»:

- «Հետաքրքրվածությունն արդեն հիմա էլ մեծ է: Բավական է աչքի տակ անցկացնել հայաստանյան մեդիայի լուրերի ժապավենները եւ նախընտրական գործընթացների մասին մեկնաբանությունները: 2019 թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ մասնակցեց հիմնականում Հայաստանից անկախ դտորդների աննախադեպ մեծ բանակ: Բայց ընտրական ակտիվության պայթյուն սպասել չարժե»:

ԼՂ-ում նախկին ընտրությունները

Նախկին ընտրություններին տրված գնահատականները **հայաստանյան խմբում** տարբեր են՝

- «ուղղորդված, պայմանավորված»,
- «ազատ, բայց ոչ արդար»,
- «շատ լավը, համենայնդեպս Ադրբեջանի ընտրություններից ավելի լավն էին»,
- «շատ լավ էին նախորդ ընտրությունները, եւ այդ մասին վկայում են միջազգային կազմակերպությունների դրական գնահատականները»,
- «համենայնդեպս Հայաստանում կազմակերպված ընտրություններից ավելի լավն էին, առանց բռնությունների»:

Իսկ նախկին ընտրություններով Հայաստանում հետաքրքրվածության հարցին գլխավորապես տրվել են միանշանակ պատասխաններ: Այն է, որ հետաքրքրվածություն կար միայն քաղաքական - հասարակական շրջանակների կողմից, հայաստանյան ԶԼՄ-ներում նախկին ընտրությունները ներկայացվում էին լուրի տեսքով, իսկ լայն հանրության շրջանում նախկին ընտրություններով հետաքրքրվածություն չկար:

Կա տարբերություն ղարաբաղյան խմբի պատասխաններում:

Այսպես ղարաբաղյան 26 հարցվածներից եւ ոչ ոք միանշանակ դրական չի գնահատել նախորդ ընտրությունները, ակնհայտ գերակշռել են բացասական եւ քննադատական գնահատականները:

- քվեարկությունն արդեն խորհրդարանի նախօրոք որոշված կազմի եւ նախագահի նախօրոք որոշված հաղթող թեկնածուի լեգիտիմացման գործընթաց էր,

- ընտրություններն անցնում էին ադմինիստրատիվ ռեսուրսի ճնշման ու գործադրման միջոցով, թեեւ կային դիտորդներ:

Իսկ մի քանիսի կարծիքով, նախկինում եղել են նաեւ մրցակցային ընտրություններ, ինչպես Գերագույն խորհրդի առաջին ընտրությունները, 2007թ. եւ 2012 թ. նախագահական ընտրությունները: Իսկ խորհրդարանական ընտրությունները որպես կանոն անցել են ոչ մրցակցային, դրանց նկատմամբ հետաքրքրությունն էլ ավելի պակաս է եղել:

Ղարաբաղյան հարցվածները հայաստանյան եւ ադրբեջանական ընտրությունների հետ համեմատություններ չեն արել, իսկ իրենց գնահատականները հիմնավորել են ժողովրդավարական չափորոշիչներով, թե որքա՞ն ակտիվ է եղել բնակչությունը, օգտագործվե՞լ են, արդյոք, ռեսուրսները ընտրողների վրա ազդեցություն գործելու հարցում եւ այլն:

Հայաստանի ազդեցությունն ու ներառվածությունը 2020-ի ընտրություններում

Ըստ հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխանների ՀՀ-ում տեղի ունեցող գործընթացներն ազդում են ԼՂ ներքաղաքական կյանքի վրա: Եվ դրանք արտացոլվելու են 2020թ. ընտրական գործընթացներում: Այդ ազդեցությունը բացատրվում է նախեւառաջ Հայաստանի եւ ԼՂ-ի ինտեգրման աստիճանով:

- «Արցախում առաջացել են հիմնավորված սպասումներ փոփոխությունների առումով, որը բերել է հասարակական մեծ ակտիվության, ինչն այս պահին արտահայտվում է բուռն կուսակցաշինությամբ»:

- «Ազդեցությունը կարտացոլվի առաջիկա ընտրական գործընթացներում ամենաուղղակի ձևով: Ընտրակեղծիքները կհասցվեն մինիմումի»:

- «Ավելի ազատ ու մրցակցային պայքար կլինի»:

- «Միանշանակ ունեն լուրջ ազդեցություն, այլապես այսօր չէինք տեսնի նման քաղաքական ակտիվություն, կուսակցությունների և նախագահի թեկնածուների անտրամաբանական աճ»:

Սրանք ԼՂ-ի հասարակական-քաղաքական կյանքի վրա ՀՀ գործընթացների ազդեցության տիպային նկարագրություններն են:

Բոլոր հարցվածների մեծամասնությունը (88%) գտնում է, որ Հայաստանը պետք է ներառվածություն ունենա ԼՂ-ի առաջիկա ընտրություններում: Հայաստանյան խմբում ավելի շատ են եղել հարցվածներ, որոնք կարծում են, որ Հայաստանը որեւէ ներառվածություն չպետք է ունենա այդ ընտրություններում: Իսկ Ղարաբաղյան խմբի 96%-ի կարծիքով այդ ներառվածությունն անհրաժեշտ է:

Տես ստորեւ բերված գրաֆիկները:





Առաջիկա ընտրություններում Հայաստանի ներառվածության օգտին նշված առավել տիպային կարծիքներն այս կամ այն չափով տատանվում են գործողությունների նվազագույն չափաբաժնից մինչեւ այն, որ «Երեւանը պետք է դադարեցնի Արցախի անկախության թատրոնի բեմականացումը, վերականգնի արցախաբնակ քաղաքացիների ՀՀ համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքը»:

Ավելի շատ են եղել այն կարծիքները, ըստ որոնց իշխանությունների մակարդակով պետք է լինեն քաղաքական հայտարարություններ, իսկ մնացած մակարդակներով՝ լուսաբանում ԶԼՄ-ներով, դիտորդական առաքելություններ, ԼՂ բնակչության իրազեկման աշխատանքներ, միջազգային կառույցների շրջանում լոբբինգ դիտորդական առաքելություններ ապահովելու համար, օգնություն ԼՂ-ի ԿԸՀ-ին ընտրացուցակների հարցում:

«Ամենաշատը Հայաստանը կարող ու պարտավոր է հնարավորինս թափանցիկ ու կարգին լուսաբանվող ընտրություններ ապահովել: Հայաստանյան մամուլն էլ է պարտավոր հավասար պայմաններ ստեղծել, այդ թվում՝ նորաստեղծ ուժերի համար:

Մենք սովորաբար կասկածամտորեն ենք վերաբերվում նորաստեղծներին, սակայն նրանց էլ պիտի հնարավորություն տանք: Բացի այդ, կուզենայինք, որ մեզ Հայաստանի հանրությունը տեսներ ու մենք էլ նրանց մեջ մեր արժեքը տեսնեինք: Ինչքան շատ դիտորդներ գան Հայաստանից ու աշխարհի տարբեր մասերից, այնքան լավ: Ցանկալի է Ստեփանակերտից հնարավորինս հեռու դիտարկեն, որովհետև քաղաքում ընտրություններն ավելի թափանցիկ են», - պատասխանել է ԼՂ-ում գործող կուսակցություններից մեկի ներկայացուցիչը:

«Եթե Հայաստանը բանակցում է Արցախի փոխարեն հակամարտության հարցով, ապա ունի բոլոր իրավունքները մասնակցելու Արցախում բոլոր գործընթացներին, ներառյալ նաեւ ընտրությունները», - պատասխանել է նախագահական ընտրություններին իր թեկնածությունը առաջադրել պատրաստվող մի գործիչ:

ՄԱՍ IV. ԼՂ քաղաքական եւ քաղաքացիական լանդշաֆտը 2020-ի նախաշեմին

Ի՞նչն է ձեւավորում ԼՂ-ի քաղաքական լանդշաֆտը

Հարցի պատասխանների ընդհանուր արդյունքներով ԼՂ-ի քաղաքական լանդշաֆտը ձեւավորում են նախեւառաջ անձերը եւ բիզնես կառույցները/բիզնես շահերը:

Առավել հաճախ անձեր ասելով հարցվածները նկատի են ունեցել մարդկանց, որոնք վաստակ են ունեցել պատերազմում եւ հանրաճանաչ են:

Բիզնես շահերի այս հարցում ունեցած կարեւոր դերակատարությունը ներկայացվել է հետեւյալ բացատրությամբ, որ «հատկապես նախորդ պատերազմի հերոսներն ակտիվ ներգրավված են եղել ոչ միայն քաղաքական և բանակաշինական, այլև տնտեսական գործընթացներում, բիզնես գործունեությունում: Մարդիկ տարիների ընթացքում կուտակել են լոկալ, տեղային շահեր, որոնք քաղաքական գործընթացներում շատ կարևոր են»:

Գաղափարները, ծրագրերը հիշատակածների քանակը գրեթե 2-3 անգամ ավելի քիչ է եղել: Գաղափարները նշվում են անվտանգության եւ հակամարտության համատեքստում, եւ այս իրողությունները բազմազանություն չեն կարող ունենալ: Ուստի նաեւ այդ պատճառով են առաջին պլան մղվում անձերը, որոնք կառաջադրեն այս կարեւոր խնդիրների առավել արդյունավետ լուծումները: Գաղափարը ներկայացվում է որպես «Միացում ընդդեմ անկախության», եւ սրա շուրջ են հիմա կոնսոլիդացվում ուժերը:

Հակամարտության գործոնը նշածների քանակը հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերում էապես տարբեր չեն:

Հարցվածների հայաստանյան խմբում 5 անգամ ավելի շատ են մատնացույց արել Հայաստանի ազդեցության գործոնը ԼՂ-ի քաղաքական լանդշաֆտի ձեւավորման հարցում, քան **ղարաբաղյան խմբում**: Նկատի ունենալով Հայաստանում գործող քաղաքական ուժերի դերակատարությունը նույնպես:

Տես նաեւ ստորե բերված գրաֆիկները:





ԼՂ-ի քաղհասարակության դերը

Եվ հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի պատասխաններում գերակշռել է կարծիքը, որ ԼՂ-ում քաղհասարակության մակարդակը բարձր չէ: Թեեւ հայաստանյան խմբում եղել են հարցվածներ, որոնք ավելի լավատեսական գնահատականներ են տվել ԼՂ-ում ներկայումս հասարակական սեկտորի գործունեությանն ու ներուժին:

Կոնսոլիդացված կարծիքով ԼՂ-ում կան ակտիվ անհատներ, որոշ խմբեր, սակայն ինստիտուցիոնալ առումով քաղհասարակություն չկա: Դա բխում է մի շարք հանգամանքներից:

Ավելի հաճախ նշվել են իզոլացվածությունը, միջազգային հանրությունից կտրվածությունը, ուստի եւ՝ ռեսուրսների պակասը: Ղարաբաղյան խմբում մի քանի հարցվածների կարծիքով թույլ է եղել նաեւ կապը հայաստանյան ՀԿ-ների հետ:

Քաղհասարակության ակտիվության վրա Էական ազդեցություն է ունենում անվտանգության զգացողությունը, ընդ որում գրեթե հասարակական ուժերի զբաղվածության բոլոր ոլորտներում: Հարցվածներից մեկի բնութագրմամբ ԼՂ քաղհասարակությունը «գազոնի նման է»: «Նախկին իշխանությունների ջանքերով տարածվեց դիսկուրս, որ արեւմտյան գումարներով գործող կազմակերպությունները արեւմտյան լրտեսներ են, արդյունքում սկսեցին զբաղվել անմեղ հարցերով՝ արվեստի դպրոց, պատերազմից տուժածների ընտանիքներին օգնություն եւ այլն: Գրեթե բոլոր քաղաքացիական նախաձեռնություններն ավարտվում են ստանդարտ կուսակցություն ձևավորելով, ինչն այդքան էլ առողջ գործընթաց չեմ համարում՝ հաշվի առնելով մեր բնակչության թվաքանակը և կուսակցությունների քանակը. 150 հազ. բնակչություն և մոտ 25 կուսակցություն: Իսկ նման կուսակցությունները չեն կարողանում կայանալ որպես կուսակցություն, հետևապես կորցնում ենք թե քաղաքացիական հասարակություն կայացնելու, թե քաղաքական դաշտը առողջացնելու հնարավորությունները»:

Հարցվածներին խնդրել էինք նշել բնագավառները, որտեղ քաղհասարակությունը կարող է արդյունավետ դերակատարություն ունենալ: Այն, որ հակամարտության հարցերում քաղհասարակությունը անելիք չունի, արտահայտված համերաշխ կարծիք է: «Հակամարտության առումով մեր հասարակությունն ավելի փակ է, քանի որ ամեն մի անձ հակամարտությունն իր կաշվի վրա է զգում: Ընտրությունների մասին շատ ավելի հեշտ է խոսել, քան հակամարտության մասին», - պատասխանել է ղարաբաղյան խմբի ներկայացուցիչներից մեկը:

Առավել հաճախ նշվել են հետեւյալ ոլորտները, որտեղ քաղհասարակության դերը կարող է նշանակալի եւ միավորող լինել.

- հակամարտության կարգավորման, Մադրիդյան սկզբունքների, փոխզիջումների հարցերը,
- Հայաստանի հետ հարաբերությունների հարցերը, «Միացում»-ի հարցերը,
- նախկին իշխանություններին, անցյալին քաղաքական գնահատականների հարցը,
- կոռուպցիայի հարցը,
- բանակի, անվտանգության որոշ հարցեր,

- հայրենադարձության հարցը,
- սեռական փոքրամասնությունների հարցը,
- երիտասարդության եւ կանանց հարցերը;

Կանանց եւ երիտասարդների ակտիվության մակարդակը

ԼՂ հասարակական-քաղաքական կյանքում կանանց եւ երիտասարդների դերակատարության մասին հարցում դրսեւորվել է միակարծություն: Այն է՝ վերջին տարիների ընթացքում երիտասարդների ակտիվությունը մեծացել է: Կանայք ավելի ստվերում են, մի շարք պատճառներով: Եւ առաջիկա ընտրություններում ավելի զգալի կլինի երիտասարդների, քան թե կանանց մասնակցությունը: Չնայած, եղել են հարցվածներ, որոնք նշել են, որ կան նաեւ ակտիվ երիտասարդ կանայք, բայց նրանք առանձին անհատներ են:

Ըստ հարցածներից մեկի կարծիքի առաջիկա ընտրություններում «կանայք ու երիտասարդներն ավելի շատ կսատարեն այլընտրանքային թեկնածուին, քան իշխանականին: Այդ երկու խմբերը ավելի շատ են ձգտում փոփոխությունների, քան ավագ սերունդը, որը տարբեր թելերով կապված է համակարգի հետ»: Իսկ առհասարակ կանանց մասնակցությունը կապահովվի քվոտավորված լինելու պատճառով, եւ դրանից առավել մասնակցություն ակնկալել այժմ պետք չէ: «Երիտասարդների դերը բացառիկ մեծ է կուսակցաշինության մեջ, կա քաղաքական սերնդափոխության ձգտում: Երիտասարդների շրջանում մեծ է նաև «Միացումի» կողմնակիցների թիվը, ինչը նույնպես կարող է ազդել ընտրությունների արդյունքների վրա: Գալիք ընտրությունները կհաստատագրեն այս փոփոխությունները, և արդյունքում մենք ականատես կլինենք երիտասարդության և կանանց դերի մեծացմանը հանրային և քաղաքական ասպարեզում»:

Նշենք, որ մեր հարցումների ժամանակ հայտնի դարձավ ԼՂ-ում նախագահի առաջին կին թեկնածուի առաջադրման որոշման մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂ-ում 2020 թ. գարնանը սպասվող նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների մասին հարցում անցկացնելու համար ձեւավորեցինք Հայաստանի եւ ԼՂ-ի տարբեր քաղաքական ու հասարակական շրջանակների ներկայացուցչական մի խումբ:

Մեր հետաքրքրվածությունն այդ թեմայով եւ հարցադրումները պայմանավորված էին մի քանի հանգամանքներով: Առաջին հերթին ընտրությունների նկատմամբ Հայաստանում եւ ԼՂ-ում հանրային ավելի մեծ հետաքրքրության, հետեւաբար՝ թեմայի արդիականության պատճառով: Այդ հետաքրքրությունն ու արդիականությունը դրսեւորվում էին ընտրություններից և պաշտոնական քարոզչությունից շատ ավելի վաղ սկսված նախընտրական տարբեր դիսկուրսների շրջանառմամբ. ՖԲ սոցցանցում եւ մեկ-երկու հայաստանյան ԶԼՄ-ներում տարբեր գործիչների կողմից առաջ մղվող նախընտրական գործընթացներով ու հայտարարություններով, տարբեր ուժերից հղվող ուղերձներով, հասցեագրված Հայաստանի եւ ԼՂ իշխանություններին, միմյանց:

Առաջիկա ընտրությունների մասին ընդհանուր սպասելիքներն ու պատկերացումները գլխավորապես լավատեսական են, հարցվածների մեծ մասի տեսանկյունից ընտրությունները նշանակալի են լինելու: Ընտրությունների ընթացքում ԼՂ-ում ներքին լարվածության, բռնությունների հետ կապված կանխատեսումներ, անհանգստություններ արտահայտել են միայն մի քանի հարցվածներ, եւ նրանք հայաստանյան խմբից են եղել:

Հետազոտության արդյունքում գրանցել ենք մի շարք տարբերություններ հարցվածների հայաստանյան եւ ղարաբաղյան խմբերի շեշտադրումներում, որոնք մեզ թույլ են տալիս եզրահանգելու, որ

- ԼՂ-ում 2020 թ. ընտրությունների հետ կապված լավատեսական սպասելիքները մեծապես կապված են ներքին կյանքի պայմանները բարելավելու, սոցիալական արդարություն հաստատելու եւ հանրային վստահություն ամրապնդելու հետ, իսկ Հայաստանում այդ լավատեսական սպասելիքները ավելի շատ անգամ կապել են ԼՂ-ի հետ քաղաքական միջավայրը համապատասխանեցնելու եւ անվտանգությունն էլ ավելի ամրապնդելու հետ:

- Այս պատկերը՝ԼՂ-ի հարցվածների դեպի ներքին խնդիրները միտվածությունը, իսկ Հայաստանի հարցվածների դեպքում անվտանգության ու հակամարտության խնդիրները միտվածությունը, արձանագրվել է նաեւ մի շարք այլ հարցերում, որոնք ամբողջովին կամ մասամբ վերաբերվել են հակամարտության եւ անվտանգության համատեքստին: Ղարաբաղյան խմբում առաջիկա ընտրությունների եւ առհասարակ ժողովրդավարության կարեւորությունն ավելի հաճախ ընդգծվել է ԼՂ-ի սոցիալ-քաղաքական, տնտեսական, իրավունքների ու ազատությունների համատեքստերում: Մինչդեռ, հայաստանյան խմբում շատ է եղել ընտրությունները հակամարտության համատեքստում կարեւորողների քանակը:

- Հակամարտությունը, ինչպես նշել են ԼՂ-ում հարցվածները, երկար տարիների իրողություն է, վերաբերում է բոլորին, ինչպես եւ պատերազմում ավանդ բերած մարդկանց պակաս չունեն: Սա է պատճառը, որ հայաստանյան հարցվածների խմբում ղարաբաղյան հակամարտության մեջ ունեցած դերն ավելի շատ է նշվել որպես ընտրություններում հաղթանակի համար վճռորոշ գործոն, քան ղարաբաղյան խմբում: Նույն տրամաբանությամբ՝ թեկնածուի նոր դեմք լինելն ավելի է կարեւորվել ղարաբաղյան խմբի կողմից, քան հայաստանյան: Նոր, ոչ համակարգային դեմք լինելը հարցվածների տեսանկյունից կոռուպցիոն գործարքների մեջ ներքաշված չլինելն է, նախկինում որոշում կայացնողների խմբին չպատկանելը: Ըստ ղարաբաղյան խմբի հարցվածների նոր, ոչ համակարգային գործիչների հայտնվելն իրենց մոտ ցանկալի է և հնարավոր:

- Չնայած ԼՂ-ի առանձնահատկություններին՝ փոքր հանրություն, որտեղ բոլորը բոլորին ճանաչում են, ղարաբաղյան հարցվածների տեսանկյունից քարոզչությունն ունենալու է կարեւոր նշանակություն առաջիկա ընտրությունների ժամանակ, ընդ որում՝ առաջին հերթին կենդանի շփումների տեսքով, հատկապես գյուղական բնակավայրերում: Եվ դա ունենալու է նշանակություն նաեւ այն առումով, որ այդպես մարդիկ հասկանալու են, որ իրենց ձայնն ու ակտիվությունը կարեւոր են: Առհասարակ շատերի կարծիքով առաջիկա ընտրություններում մասնակցությունն ավելի բարձր է լինելու, քան նախկին ընտրական գործընթացների ժամանակ էր: Չնայած, կլինեն նաեւ ոչ փոքրաթիվ քաղաքացիներ, որոնք առհասարակ ընտրությունների չեն գնա:

- Հայաստանի հետ հարաբերություններ պարզելու, քաղաքական միջավայր համապատասխանեցնելու խնդիր ԼՂ-ի հարցվածների տեսանկյունից, կարելի է ասել, գոյություն չունի: Մինչդեռ, այս խնդիրը մի քանի հարցերում ընդգծել են հարցվածների հայաստանյան խմբում: Ղարաբաղյան խմբի ճնշող մեծամասնությունը գտնում է, որ Հայաստանը պետք է ներառված լինի առաջիկա ընտրական գործընթացներում տարբեր մակարդակներով, իսկ հայաստանյան խմբում կարծիքները տարբեր են, սկսած «ամենալայն ներառվածությունից» մինչեւ «ոչ մի ներառվածությունը»:

- Բոլոր հարցվածների տեսանկյունից Հայաստանում ընթացող գործընթացները միանշանակ ազդում են ԼՂ-ի հասարակական-քաղաքական կյանքի վրա: Եվ դա խոսում է ինտեգրվածության մակարդակի մասին: Ըստ էության առաջիկա ընտրությունների նախօրեին ԼՂ-ում կուսակցաշինության, հասարակական ոլորտում վերջերս նկատվող ակտիվությունը նույնպես այդ ազդեցության դրսեւորումներից է: Ընդ որում, ԼՂ-ում քաղաքական լանդշաֆտը ձեւավորվում է ավելի շատ անձերի հիմքով, քան գաղափարների, ծրագրերի: Եվ այդ անձերը հայտնի գործիչներ են, որոնց մոտեցումները հակամարտության հարցում իրարից առանցքային տարբեր չեն: